

~~N567~~

С 1926 № 732


Պատմարելու բայր յեկանելի պատճեն!

ՓՈԳԻԿ ԳՐԱԴԱՐԱՆ № 1

Գ. ՄԵՍՅԱՆ

ԲԱԴԱԼԸ

ՎԻՃԱԿԱ
ԻНСՏԻՏՈՒ
ՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
Ակադեմիա Նաւի
ՀԽՍՀ



Գ. Ա. Տ Ե Բ Ի Ռ Ո Զ Ո Ր Ք

ԹԻՖԼԻՍ
1926

891.995

Վ-66

30 MAY 2011

196-1782
8105.80.85

~~1567~~

三

2411

91.995

1-64

ՓՈՒՐԻԿ ԳՐԱԴԱՐԱՆ № 1

Գ. ՄԵՍՅԱՆ



F U T U R E



ՊԱՏՄՎԱԾՔ

Պ Ա Տ Կ Ե Ր Ա Զ Ա Ր Դ



ԹԻՖԼԻՍ
1926

AN
AT 111. 11
BIRDS
FROM MICH.
93. 3



60155-67

ԳՐԱՆԵՐԱՎԱՐ № 731

θήση

Spring 2000

Թիֆլիս Ժ. Տ. Խ. Պոլիգր. բաժնի 4-րդ տպ., Պուշկ. փող. 3.



F U T U R E

(Պատմվածք)

Գ. Մեսյան

I

Գյուղացի Սահակն ու իր կին Շողերը յերկար խորհուրդ անելուց հետո վճռեցին՝ իրանց Բաղալին քաղաք տանեն ու մի արհեստի տան:

Յերբ Սահակը Բաղալին յետեից զցած ճամբար ընկավ դեպի քառակի դաշտ, ու ճամբին նրանց պատահող գյուղացիք հարցնում ելին.

— Ալբ, Սահմակ, եղա անջաղ յերեխան բանի հասել ա, ընչլի չես թողնում կենա, քեզ ոգնի, քաղքիցը քեզ ի՞նչ ոգուտ:

Սահակը Տանյա Եղիշեալիս եր.

առ կայ եց անում, ապա
գրա պատիմ, և պահ թէ ապա
ասքին ար է վար ու ժ, ու
թի ազգամ, առամ չեղ թէ
թի շնորհ անու յերկու բազու
պետական, առամ իմ, թէ առա
թի բա անուի բախ, թէ յի
առ եռ անում, առամ
առ պատիմ եր եր

Պատրիարք Նա, ոզու յա
ցից Փափու բառ մի են առաջ
բնիան թուժերը Խանութառնե
կոր առաջարկ սովորի,
հուրդ տալիս այդ, բայց ինքը Ա
սական,

ւտում, ամմա վոր ունեցածիս
մի կտոր հող ունեմ, յերկու
զը սադ տարին բեզյառի ճամ-
րփա ցամաք հացն աշխատենք.
Են են տանը նստած: Տանեմ
լորի, մի կտոր հացի տեր դառնա.
Ա համար ել ե լավ կլի:
ուն եցին տարիս նրանք ու Սա-

լը պցած, յերկար պատեց փողո-
եղ չգտավ, վոր հավաներ ու յե-
համոզում ելին «աշկերտ» տալ,
նա: Իրանց գեղացիք ել ելին խոր-
ակը զլուխը շարժում եր բացա-

— ԶԵ, ախակեր, ասում եր, յես ու իրան մերը վճռել ենք՝ փեշակի տանք, փեշակը վոր կա, վոսկի յա, մի կտոր հալալ հաց, մարդու ծոցում զբած, վորտեղ սովածանա՝ ենտեղ կհանի, կուտի: Առուտուրը—մեր բանը չի. յես մարդ եմ խաբել, վոր իմ տղան մարդ խաբի... ու յետ եր դառնում, պատմում Մագոյի պատմությունը:—Մեր գեղումը, ասում եր, մի չարչի Մագո կար: Զարչությունով մեծ հարստություն եր կիտել, բոլորը պակաս չափելով ու թեթև քաշելով. մեռնելիս, ոխտն որ եր, չարչարվում եր: Խալխը ծիծաղում եր, թե են ե չարչի Մագոն հաշիվ ա տալիս:

Շատ ման գալով, յեկան կանգնեցին մի դարբնոցի առաջ: Արհեստանոցի դռները կընկի վրա բաց եյին, փողոցից լավ յերեսում եր, թե վոնց իրարով անցած, աշխատում եյին մրոտ բանվորները: Փուքութուչում եր ու փնչացնում ենպէս, վոր կասես թե կապոտած գումեշ լիներ: Քուրի բերանից գողդողալով ներս ու գուրս եյին անում կարմիր լեզուները. հետո կաշվե գողնոցավոր վարպետը արագությամբ դուրս եր քաշում ենտեղից յերկաթը ու համարյա շպրտում, նետում զնդանի վրա: Մեկը մյուսին հասվեհաս ճոճվում եյին ողում ծանր կուանները ու իջնում. յերեքն եր, չորսն եր... աչք ել չեր հասնում, վոր մարդ համարեր: Ամեն մի զարկի հետ մի բուռը վոսկի յեր շպրտում յեռացող յերկաթը զնդանի շուրջը. իսկ վարպետը իր վարժ ու հմուտ ձեռքով և չափ եր տալիս կուանավորներին, և հատ-հատ ել ենպէս հարվածում յերկաթը, վոր կողքից նայողը վախում եր, թե, հրես իր մուրճն ել յերկաթի հետ միատեղ կտափակի կուանների տակ, զնդանի վրա:

Վոր յերկար կանգնեցին, թամաշա արին եստեղ՝ չա դարձավ վորդուն.


— Բաղալ ջան, ասավ, սրանից լավ փեշակ չի ըլիւ այ վորդի, արի հարցնենք, տեսնենք ի՞նչ մարդ ա սրա խազեյինը ու սրա մոտ աշկերտ մտի: Փեշակդ կսովորես, վորդի, հետո, վոր քաղաքումն ել չուղենաս մնալ, կզաս մեր գեղը՝ ենքան կացին, ցաքհատ, խոփ, մանգաղ կշինես, ենքան գործ կածեն գլխիդ, վոր չես իմանա, թե ինչ անես:

Բաղալը, վոր ենքան ել հեշտ չեր բաժանվել գեղիցը, գեղը փերադանալու մասին վոր լսեց՝ դուր յեկան հոր խոսքերը, ու նրանք սիրտ արին, մտան արհեստանոցը:

— Ի՞նչ ես ուզում, բիծա, զիմեցին նրան:

— Ես դուքանի խազեյինը վորն ա, խազեյինին եմ ուզում, ախակեր:

— Ի՞նչ ես անում խազեյինին:



«Բաղալ ջան, սրանից լավ փեշակ չի ըլիւ այ վորդի...»

— Ուզում եմ ես յերեխին աշկերտ տամ, աշկերտ չի վերցնի:

— Եստեղ նստեցեք, ես ա կզա:

Քիչ հետո խազեյինը յեկավ: Սահակը շատ հավանեց նրան, լավ մարդ եր յերեսում նրա աշքում:

— Բիծա, ասաց, յեթե քաղքի լպատված յերեխաներից լիներ, չեյի վերցնիլ, բայց վոր գեղացի յա, դու յել, տեսնում եմ, խեղճ մարդ ես, քու խաթեր համար կվերցնեմ:

Իրիկունը Սահակն ու Բաղալը խազեյինի հետ միասին տուն յեկան: Զայ խմեցին, պլծան, պայմանավորվեցին, վոր հինգ տարի Բաղալը խազեյինին ծառայի, նրանից հետո խազեյինը թուղթ կտա, վոր նա փեշակը սովորել ա, ուստա յա. «Իսկ յեթե հինգ տարուց

հինգ որ պակաս դուրս դա՝ հովոչ մի թռւղթ չի ստանալ» — զգուշացրեց Սահակին:

Սահակը վերցրեց պայմանագիրը, հետք բերավ գյուղը, քյոխվին փեշտել տվավ ու դրկեց քաղաք:

II

Ուս ձեռքը պարտապում եր, Բաղալի գլխին եր հասցնում.

— Տո, վոչ ու փուչ, եսպես աման կլվանան. խփում եր խաղեյինի կինը:

— Տո, գետինը մտած, եսպես վոտնաման կսրբե՞ն, գլխին եր գալիս կոշիկը, նրա մեծ աղջիկը...

Բաղալը համ տան ծառա յեր, համ արհեստանոցի աշկերտ: Առավոտները սամովար եր գնում, շուկայից տուն բերում առած մըթերքը ու գնում արհեստանոց: Յերեկոյան՝ շուտ վերագանում եր տուն, անհրաժեշտ դործերն անելու—նորից սամովար, ամաններ լվանաց ենքն:

Ազատ ժամերին կողք-կողքի նստում եյին Բաղալն ու Նիկոլը. մինը զնուց եր պատմում, մյուսը՝ զրքից: Մեկ ու յերկու անգամ չեյին իջեց թափով ձեռքերը Բաղալի գլխին, թե «Նիկոլի դամերը մի խաղարի. թող սովորի», բայց նրանք ելի մնում եյին իրար ընկեր:

Արհեստանոցում ել պակաս չեր ստանում Բաղալը: Ով հաս- սում, զիմին եր զալիս: Մի անգամ նա գանգատվեց խաղեյինին, թե՝

— Ինձ ուշանց են առիս բանվորները, յես բնչ եմ արել նրանց:

— Աշրջ ել են նաևում, պատասխանեց խաղեյինը, բա մւմը պահն ու շունց առ, ու առաներին, թե ինձ. աշկերտին մինչեւ չթա- կեն, ու շունց չտան, նա փեշտի չի սովորի, կարգը եղա. դու գլուխդ կախ, քո գործիդ կաց:

— Հը, կարաս խաբարը վզզացնես խաղեյինին, լածիրակ, վրա եյին պըծնում դրանից հետո, յերբ Բաղալը մոտենում եր մյուս- ների զըռույցին:

— Այ, թե խաբար կտա, վրա պըծավ մի անգամ կոանահար Յերկանդը ու դուրս քաշեց քուրայից շիկացած յերկաթը.

— Տեսնում ես, փորդ կկոխեմ, շան լակոտ, թե բերանիցդ բան ես հանել տանը:



«Տեսնում ես, փորդ կկոխեմ, շան լակոտ, թե բերանիցդ բան ես հանել...»

Բաղալը սոսկաց ու յետ ու յետ գնաց, յերբ տեսավ շիկացած, փայլվող յերկաթը ու յերեակայեց, վոր իրա փորն են կոխում այն թշալով: Բայց թե ինչու պետք ե անեյին այդ, նա վոչ հասկացավ, վոչ ել թե համարձակվեց հարցնել: Հետո միայն զլսի ընկավ, վոր նրանց խոսակցությունը խաղեյինի հասցեյին եր:

— Վոր իեկըդ զլսիդ պահես, բերանիցդ պինդ լինես, մեզանից ավելի ոգուտ կունենաս, քան թե խաղեյինից: Նրա ամաններն ես լվանում, մի փոր կուշտ հաց ել չի տալիս, վոր ուտես, բայց փեշակը, քո մշտական հացը, մենք պետք ե տանք քեզ—ասացին մի ուրիշ անգամ:

Եղ որվանից Բաղալի լեզուն բացվեց նրանց առաջ, նրանք ել տեսան, վոր սխալված են յեղել Բաղալի մասին. վստահացան մեկու ու Բաղալը գառավ բոլորի աշքի լույսը իր շնորհքով ու բնա- վորությամբ, իսկ հետո յել ավելի պետքական իր գործերով, քան թե նրանցից վորեւե մեկը:

III

Յերեկոները Բաղալի համար ուրիշ շրջան եր սկսվում.

— Բաղալ, արի եստեղ, կանչում եր խազեյինը խրատելու. այ վորդի, տեսնում ես, վրբ քեզ իմ Նիկոլից չեմ ջոկում, սիրում եմ նրան հավասար—այսպես քաղցր եր խոսում մանավանդ, յերբ նա տուն եր գալիս գինեանից: Ալկոնիլի հոտից Բաղալն ուզում եր շամի, բայց պարտավոր եր լսելու մինչև վերջը:

— Եսոր դու իմ տանը, իմ հացն ուտում ես, իմ գործին ել լավ պետք ե մտիկ տաս, թե չե զլսիդ պատիժ կբերի կերածդ աղ ու հացը: Դու տեսամը, վոր հորդ խաթեր համար քեզ աշկերտ վերցրի. ասացի խեղճ մարդ ա, թող վորդին ինձ մոտ բան սովորի, մի կտոր հացի տեր դառնա: Սրա, նրա խելքովը չընկնես: Են բոլոր բանվորները, դրուստ ա, իմ հացովն են ապրում ու յերեսիս «խազեյին» են ասում, ամմա քամակիս իմ թշնամիներն են, ուզում են թե քարիսնես քանդեն: Հազար ու մի վատ բան կսովորեցնեն քեզ, վորդի, վոր նրանց ականջ դնես: Խելոք, խոնարհ կծառայես մինչև ժամանակդ լրանալը, հետո իմ ձեռքովը քեզ ուստա ոխնել կտամ ու, նրանից գենը՝ մաջադ վոսկի ա, վորտեղ չաքուճդ խփես՝ ջրիդ փողը չի պակսիլ:

— Յերբ վոր յես քարիսնումը չեմ լինում, աչքով պահի, տես ով ի՞նչ ե խոսում ինձանից ու արի՝ տաս...

Բայց Բաղալը արդեն խելքը զլսին տղա յեր. յերըորդ տարին եր, ինչ վոր քաղաքումն եր և լավ զիտեր, թե ինչպիս պետք ե ընդունի ամեն մեկի խրատն ու խորհուրդը: Խազեյինը հիմա քաղցրացել եր Բաղալի հետ. նա ավելի յեր պետքական, քան առաջ:

— Բաղալը ինձ համար մի լավ ուստից գլուխ ա, խոստովանում եր նա կնոջ մոտ շատ անգամ. շան լակոտը, դժարը աչքը մի բանը տեսնեն ա, են սհաթը վերցնում ա, ենքան շնորհքով ա վոր.

— Վոր շնորհքով չըլի, ենքան գործի արանքումը եղակես զիր կառվորի. հազար անգամ զլսին տալիս ենք, զիրը ձեռքիցն առնում, շպրտում, ելի, գնում ես տեսնում կուխնումը կողքին դրած, համ իր գործն ա անում, համ ել՝ կարդում: Մեր Նիկոլին տված ուսումի չեթվերը վոր դրան տային, ով գիտա տասն անգամ նրանից շատ սովորեր:

Յեվ, խկապես, յեթե Նիկոլի ընկերակցությունը չլիներ են

տանը՝ Բաղալը շատ վաղուց վախած կլիներ գյուղը, բայց, նախ գիրը կապեց նրան, հետո ել իրա ընկերները:

Հիմա նրա ձեռքին հաճախ յերեւում եյին նոր ու նոր գրքույկներ, վոր կարգում եյին Նիկոլի հետ միասին, դատում եյին Նիկոլի հետ միասին:

Կիրակի որն եր միայն Բաղալի համար փոքր ի շատե ազատ որը, բայց այդ որն ել նա շատ անելիքներ եր ունենում, վորի մասին տանը վոչ վոքի չեր ասում:

IV

Մի կիրակի որ ել տանից շուտ ծլկվեց Բաղալը: Ինչ վոր անհամբերություն եր նկատվում նրա շարժումների մեջ: Գնաց ու կես որին ել վերադարձավ սովորականից ուշ, այլայլված ու գլխաբաց:

— Բաղալ, ինչի՞ ուշացար:

— Եղ ինչի՞ յես սփրթնած...

— Գդակդ հւր ա, Բաղալ...

Բաղալը միայն վերջին հարցին պատասխանեց.

— Կարմունջովը անց կենալիս, քամին զլիցած տարակ, Քուոր գցեց:

— Կարմունջումը քո գլուխդ ծեծողն ով եր, վոր գդակդ ել քամին տանի, Քուոր գցի—վրա պրծան ամեն կողմից:

Հետեւյալ որը քաղաքի զանազան մասերում զանազան ձևերով եյին պատմում կիրակի որվա «բունտի» մասին: Ասում եյին, վոր ցուցարարները հանկարծ մի դագաղով միացել են ինչ վոր բազմամարդ հուղարկավորության ու յերբ հասել են քաղաքի շուկան՝ վորտեղ ամբոխը ստվարացել ե մի քանի անգամ, ընթացքը կանգ ե առել հոգեհանգստի: Ահա այդ ժամանակ բարձրանում են ամբոխի միջից հերթով ճառախոսները. մեկ ել դագաղը բացվում ե ու հանվում կարմիր գրոշակները նրա միջից, և սկսվում —«կեցցէ», «կորչի».. Թռուցիկների գաստաները գուրս են գալիս դագաղից ու փոփովալով ցրվում են հազարանոց ամբոխի զլսին: Ամեն մեկը մեքենայարար հրելով կողքինին, ձեռքը մեկնում եր վերցնելու և խլալում եյին իրարից: Այս շփոթն ու իրարանցումը տեսում ե այնքան ժամանակ, մինչև վոր կողակների ձիավոր խմբակները զանազան փողոցների բերաններով մանում են եղ հրապարակը:

Խոնված ամբոխը դեռ հրապարակից չեր քաշվել վոր ձիյերի վոտնածայնը և մտրակների շպացը իրարանցում և զցում մարդկային զանգվածի մեջ, վորի թանձր կենարոնից դեռ լսվում եր լի կոկորդներով՝ «կորչի... կեցե...»:

Խառնվում են հրացանի զարկերը. շփոթը մեծանում. ամբոխի միջից ել հատ-հատ ատրճանակի պատասխաններ են լինում, վորից հատո ծեծն ու խուճապը ավելի յե ուժեղանում և ամբոխը, իջնող ալիքների նման, կամաց կամաց հալվում ե զանազան ուղղությամբ: Դատարկ հրապարակում մնում են՝ տեղ-տեղ ընկած սպիտակ թերթիկներ, սկսե գլխարկներ և իրենք, ձիավոր կողակներն ու գորոդովոյներ՝ այուների պես բսած: Բաղալի գլխարկն ել մնաց այդ որը



Բաղալի գլխարկն ել մնաց այդ որը ձիերի փոտքերի տակ...»

ձիյերի փոտքերի տակ. բայց նրա փոխարեն նա ստացավ կողակներից նվեր մտրակի մի քանի այնպիսի թափանցող հարվածներ, վորոնք յերբեք չջնջվեցին այնուհետև Բաղալի մատաղ հիշողությունից:

— Այդ մտրակները—ասում եր նա, արդեն, շատ հետո—իմ ամենալավ ուսուցիչներս յեղան, վոր յերդվեցը ինձ՝ անհաշտ թըշնամի մնալ բոլոր բոնություններին:

V

Բաղալի գլխարկի պատմությունը գաղտնիք չմնաց խաղելինի համար ու մի որ նրանք խոսեցին յերես-յերես:

— Բաղալ, գիտես, վոր մուկը ինքը մի բան չի, ամմա ընկնում ա 100 թունգանոց կարասը՝ մուռտառում: Այ բալամ, հիմա դու յես—ուզում ես քարխանաս մուռտառես, իմ հալալ աշխատանքս հարամ անես, փշացնես: Դեռ յերեկ մեկ, եսոր՝ յերկու. տըեխներդ չուստ դառավ, վորդ հացոտ ելավ՝ հիմա նոր ճամբեք սովորեցիր: Քո խաղելինը յես եմ, քեզ բան սովորացնողը՝ ուրիշ...: Եղ «ծուռ ճամբեքիցը» ձեռը վեր կալ, խելքդ գլխիդ ծառայի մինչև ժամանակդ թամամի, թուղթդ առ, բարի ճանապար, ուր ուզնում ես, գնա: Թե չե, վոր սրանից դենը մի բան իմանամ քեզանից՝ հայդա, դուրս կանեմ իմ տանից:

Բաղալը հենց հետեյալ որը թողեց նրա տունն ու արհեստանոցը: Նրան մինչև այդ որն ել պահողը նիկոլն եր, թե չե, տամանգամ թողած, հեռացած կիհներ. իսկ հիմա նա աղատ կարդում եր իրեն հարկավոր գրքերն ու թերթերը:

Մի քանի որ չանցած՝ ընկերները Բաղալին տեղափորեցին քաղաքի մեծ գործարաններից մեկում: Ասացին, վոր նա ենտեղ հարկավոր ե: Բաղալը գառավ գործարանի հոգին. նրա անունը բոլոր ընկերների բերանումն եր: Շարժուն, աշխատյժ ու համարձակ մի տղա: Վաղում եր գործարանից գործարան, ժողովից՝ ժողով. յերեվում եր ամեն տեղ. ծոցով թուուցիկներ եր կըում, զրպանով տաներ, փամփուշաներ—պետք եր գալիս ամեն տեղ:

Յերկար չանցավ: Գործարանում հսկող աչքերը Բաղալի անունը հասցրին կառավարչի ականջը: Սա յել կանչեց Բաղալին, իսկ նայեց վոտից զլուխ՝ ու լուռ սպառնալիքով նախազգուշացրեց: Բաղալը ծիծաղեց մաքումը ու գնաց իր բանին: Դրանից հետո շատ չանցավ: Գործարանում գործադուլ արին, քաղաքում՝ ցույց. Բաղալը յերկու տեղն ել աչքի ընկավ ու բռնեցին: Դրանից հետո ամեն տեղ ճանաչում ելին Բաղալին. վորտեղ ինչ պատահեր՝ Բաղալը պետք ե ձերբակալվեր:

VI

Բաղալի առաջին ձերբակալման լուրը վոր գեղը հասավ, բոլորը

ցավեցին Սահակի համար, վոր տղան եղպես «փուչ» դուրս յեկավ (գեղի աչքում բերդ մտնելը վարկաբեկիչ եր համարվում): Բայց վոր դրանից հետո քաղաքում ձերբակալումները քանի զնաց շատացավ՝ ու իմացան, թե ինչի համար են «բունտերը», եղ բանը փոխեց գեղացոց վատ կարծիքը Բաղալի մասին:

Քաղաքի լուրերը շարունակ գեղն եյին համառում ու նրանք չափում, ձեռում, քննադատում եյին իրանց մեջ: Զմեռվա մի որ ել, պարապ գյուղացիք կշկոված մի պատի տակ զրուց եյին անում, վոր քաղաքից խարարը յեկավ, թե «մեծ խառնակություն ա ենտեղ»:

— Ասում են, ելի բոմբ են դցել...

— Ասում են՝ յերանալ են սպանել...

— Տենաս, շատ մարդ ե խարաբ ըլթ...

— Ասում են, անհաշիվ մարդիկ են բռնոտել... բանվորներին են բռնոտում...

Ավելացնում եր այսպես ամեն մեկը իր գիտեցածը մի անհայտ աղբյուրից:

— Վոր հենց ա, Սահակի տղան ել կլի միջներումը:

— Սահակի տղան. ամոթ չի բա նրա համար, վոր միջումը չըլի՞ հեգնեց Զարչունց Համբոն, գյուղի առաջին հարուստն ու վաշխառուն:

— Աշխարհի հանդարտ վախտը Սահակի տղան միջումն արլում, բա հիմա միջումը չըլի՞ զնացեք աչքալուս տվեք հորը, ուժ տվավ Համբոյի խոսքին նրա նման մի ուրիշը—Մարդակերանց Առանը:

— Յավաշ, կարելի չի իմանանք, ինչ պլիշիննի յեն բռնոտել, յա զակոնը պալազայեցա անում բոմբ դցելուն—մեջ մտավ Զաղացպանանց Սալդաթը, վոր որենսպետ ու ոռւսապետ եր համարվում:

— Են պրիչիննին են բռնոտում, ու աչքներն ել հանում են, վոր Գողանց Սահակի տղան ու իրա նմանները իմպերատոր թագավորին ուզում են թախտից վեր բերեն, թափաներին մոշա անեն, աշխարքս հավասարություն դցեն... բորբոքված պատասխանեց դարձյալ Համբոն:

— Վո՞նց հավասարություն դցեն յանի, հարցրեց անվստահ, պատառուած շինելի տակ կծկված Ղուկասը, վորին աղքատության պատճառով՝ Ղոթուր Ղուկաս եյին ասում գեղումը:

— Վո՞նց ել անգաճը ձենի յա համա... մի նրան տեսեք, նրան, նհենց հավասարացնեն, Ղոթուր Ղուկաս, վոր ել հարուստ ու աղքատ չըլի. ինչքան յես ունենամ, ենքան ել դու ունենաս—լավ չի ըլի՞:

— Բա փիս կլի՞ դե ենա, ասա աղքատի մասին են մտածում ելի, մեր սրտի միջիցը խոսում: Բա փիս կլի, Զաքար, Առաքել, վոր մի տեսակ ապրենք բոլորս, որչով, ելով, խալխով...

— Վո՞նց մի տեսակ, վրդովված բղավեց Համբոն, խոսքերը ծոմուելով, յանի թե իմ յերկու լուծ յեզս տան Ղոթուրին, յերեք կովս՝ Սալախանա Մուկուչին, մի լուծ գոմեշս սոված Ուհանին, Աթոյին... հողերիցս ել Ստեփանին, Խեչոյին, Կաբոյին, յես ի՞նչ գիտամ, եղ պատի տակ շարվածներին ելի՞ եղպես չի...

— Հա, ի՞նչ ա վոր, հանգիստ պատասխանեց Նալբանդանց Ավանը. Ղուկասը աղքատ ա, Ղոթուր են ասում, վախենում ես յեզները նրան սագեն վ՞ո՞չ, թե՞ կովի մածունը նրա յերեխանցը վընաս ատ:

— Ինչի՞ չի սագիլ, մթամ քեզ սագիլ չի, վոր իմ հողերիցը մի տասը դեսյատին կարեն, քեզ տան:

— Ի՞նչ ա վոր, ինձ հավանում չես, Համբոն. թե՞ դու ինձանից ավելի շատ ես աշխատում, կամ թե քո հերը իմ հորիցը լավ մարդ եր:

— Բա վ՞ո՞նց չես աշխատում. Նալբանդի թոռը, չի ըլի՞ իմանք, ես տարի դուռ քանի՞ որավար ես սերմել, յես՝ քանիսը: 35 որավար ցորեն եմ սերմել, 15 որավար՝ գարի, դու 2 որավար ունես ցանած:

— Քեզ ինչի՞ յա եղքան որավար հող ըլում, վոր սերմես ու մեզ ել տնազ անես: Ինձ տուր մին եղ հողերը, Ստեփանին, Ղուկասին ու դու զրադիցը թամաշա արա, թե վո՞նց ենք վարում ու ցանում:

— Զե՞ չե՞ Ավան, եղ մի ասիլ, մին հարցրու Զարչոնց Համբոյին, թե, եղ վոր որավարների հաշիվը գիտաս, 15-ի ու 35-ի անումն ես տալիս՝ քանի՞ որ ես մաճ բռնել գութանի հետեկից, յա քանի՞ գիշեր յեզը պահել հանդի: Ելի մեր մեջքովը չի վարվե՞լ:

— Տո, հարամզադա, վրա պըծավ ու զայրույթից վեր թուավ Համբոն, դուք ինչացու յեք բա, վոր յես յեզը զնամ, յա մաճ բըռնեմ. վոր վոտքս ձգած, մութաքին կոնած, վարվում ա տափերս, յես ինչի՞ յեմ մաճ բռնում: Կարում եք, դուք ել եղպես ա-

թեք, թե չե, ձեններդ ձեզ քաշեցեք: Աշխարքս դոչաղ տղի տեղ աւ
— Բերանդ շաղ մի տալ, Զարչունց Ղազարի տղա, հարամ-
զադի ձեն ա գալիս: Եղ դոչաղություն չի, վոր դուք կարում եք
անեք, մենք՝ չե. Եդ գելություն ու գաղանություն ա, վոր ում
ձանկն ա ընկնում՝ նայել կու ա տալիս: Բա, բոմբ գցելը վժնց անի
սրան, դե, ենա բոմբը ձեզեմների համար ա, ելի...

Եստեղ ավելի բարձրացրին ձենները. յերկուսին ել կողմակից-
ներ դուրս յեկան. զրուցը դառավ՝ աղմուկ, կոփ, հայնոյանք: Հայ-
նոյանքի մեջ լսվում եր և Սահակի ու Բաղալի անուններն ել. դուցե
շուտով բանը դագանակների ել հասներ, բայց Համբոն ու Ասլանը
զգացին իրանց դիմացիների ույժն ու զայրույթը ու քաշվեցին հա-
թեթա տալով (սպառնալով), կորան մթնի մեջ:



«—Եզտ պաս պահեցեք, մոր... մեր հողերը կիլին ձեզ տան...
—Զե, դուք հանդիսա կացեք, վոր միշտ ուրիշները կաշխա-
տեն ու դուք ել կուտեք, պառշներդ լպստեք. լավ իմացեք, վոր մի
որ ել ձեզպեսների ատամները կջարդեն ու ես ճղորտված շինելնե-
րում կոլորված տղաներին կճանանչեք, կճանանչեք, Զարչի Դազարի
տղա...»

— ...Եդ ա պաս պահեցեք, վոր Գիգոլանց Սահակի տղան ու նրա
նմանները մի որ կիլին մեր հողերը ձեզ տան, դուք ել՝ կվարեք,
կսերմեք...

— Զե, դուք հանդիսա կացեք, վոր միշտ ուրիշները կաշխա-
տեն ու դուք ել կուտեք, պառշներդ լպստեք. լավ իմացեք, վոր մի
որ ել ձեզպեսների ատամները կջարդեն ու ես ճղորտված շինելնե-
րում կոլորված տղաներին կճանանչեք, կճանանչեք, Զարչի Դազարի
տղա...»

Սրանից հետո բավական ժամանակ անցավ: Բաղալից ել խա-
րար չկար. գեղումն ասում եյին՝ նրան Սիրիր են տարել, կորցրել:
Քաղաքի «խառնակություններն» ել վերջացել եյին ու գեղերումը դեռ
բարձր եյին խոսում ու հայնոյում Զարչոնց Համբոն ու իր նման-
ները: Բայց յերբ սկսվեց մեծ կոփը, նրանից հետո յել Ռուսաստանի
Մեծ Հեղափոխությունը՝ են ժամանակ ելի լսվեց Բաղալի անունը:
Լրազներում շուտ-շուտ եր գրվում նրա մասին. ու յերբ ենտեղի
հեղափոխությունը կարմիր Բանակի հետ յեկավ մեզ մոտ՝ բոլորն



«—Ուր ա հիմա Զարչոնց Ղազարի տղան,
—Ուր են, են 35 ու 50 որավար վարու»

իմացան, վոր առաջվա, գեղացի փոքրիկ Բագալն ել վերապարձել երեղ քաղաքը, վորպես մեծ մարդ — հասարակական գործիչ:

Գեղումն ել իմացան Բաղալի գալու մասին. հիմա յել հավաք-
վում եյին զբույցի ու ավելի աշխույժ խոսում Բաղալի վրա, ավելի
բարձր...

գեղը փոխվել եղ հիմա. առաջվա գեղի տերերը տափն եյին
ծծվել, կորել: Հիմա յերեսում եյին նրանք, վորոնք առաջ վախենում
եյին ձայն հանել:

— Ո՞ւր ա, հիմա Զարչոնց Ղազարի տղան, են վոր ըռեխը ես-քան բաց եր անում,—ասում եր Ղուկասը, կոները յետ տանելով:

— Ո՞ւր ա Սարդակերտաց Յալասը, զոր մեղանից դոչչաղ եր.
— Ո՞ւր են, են 35 ու 50 որպավարներ վարողները, —ասում եր

Ուշանը ու քահ-քահ ծիծաղում. թող գան հիմա տեսնեն, թե ով ավարող տղան:

— Ո՞ւր են են ուղաերը փալանով կուլ տվողները, վոր մեզ եւ գեղն ել ուտում եյին քյոլսպաների ու պրիստավների հետ...

Խոսում եյին եսպես հաճախ, իրար հիշեցնում իրանց ծանոթ,
անցած որերից, են առաջվա ՂոթուրՂուկասը, Սոված Ուհանն ու
մյուսները, յերբ խոսք եր վեր գալիս Բագալի վրա կամ թե ժո-
ղովի ժամանակ աչքներովն եր ընկնում նրա պատկերը, վոր կախ-
ված եր բարձր ու զարդարում եր գյուղիսորհրդի համեստ սենյակը
իբրև նույն գյուղի շեֆի:



«Ազգային գրառադաշտ»



NL0350609

11227

ԳԻՒԸ 25 ԿՈՊ.

8001

Ա. Տ.

8001 0

ԽՄԱՆ ՀՈՒՄԱԿ
ԽՈՏՏՈՅԵՅԴՆԻ
Ակադեմիա Խու
ԽՍՀ

Վահանվում են նոյ գրավածառնոցներում, զումբրով գնազներին
զեղչ 20%:

Հեղինակի հասցեն. Տիֆլիս улица Жуковского № 10.